ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 (չորս) անդամներ:

Բացակա էին՝ Մ. Բաբայանը, Ա. Ավետիսյանը, Գ. Մարգարյանը, Ա. Ավետիսյանը, Գ. Մելքոնյանը, Ա. Զաքարյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ 1-ին փոխարինող Հ. Դանիելյանը:

Մասնակցում էին նաև Ս. Մելքոնյանը և Ա. Մանուկյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի 1-ին փոխարինող Ա. Գրիգորյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը:

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Եղեգիս համայնքի ավագանու 29-ը նոյեմբերի 2024թ. հինգերորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Սալլի գյուղի անվանափոխման քննարկման մասին,

3.Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին («Արտաբույնք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին) անշարժ գույքերը նվիրատվությամբ անհատույց հանձնելու մասին,

4.Եղեգիս համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

5.Դրամական օգնություն ցուցաբերելու մասին,

6.Եղեգիս համայնքի տարածքում նոր աղբավայրի նախագծմանը, կառուցմանը և շահագործմանը հավանություն տալու մասին,

7.Քաղաքացի Ատոմ Յուրիկի Գաբրիելյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

8. Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,65 հա և 0,67061հա մակերեսներով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

9. Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,70694հա և 0,80684հա այլ հողատեսքերն աճուրդային կարգով օտարելու մասին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120Ա/

Լսեցին

ՍԱԼԼԻ ԳՅՈՒՂԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետի, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 17/10/2024թ. N 01//08/6626-2024 գրությունը

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Սալլի գյուղի անվանափոխումը «Սալիշեն» անվան:

Կողմ- 0 Դեմ- 9 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ («ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Արտաբույնքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի գրությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաբույնք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված անշարժ գույքերը նվիրատվությամբ անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին («Արտաբույնք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին)՝

1)բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-010-0422-0001, մակերեսը 0,085հա,

2)բնակավայրերի նշանակության այլ հողատեսքը, կադաստրային ծածկագիր 10-010-0422-0001, մակերեսը 0,04003հա:

2.Առաջարկել՝ իրականացնել վերը նշված անշարժ գույքերի պետական գրանցումը, ինչպես նաև գործառնական նշանակության փոփոխումը հասարակական կառուցապատման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 9 Դեմ- 0 Չեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122 Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 20 -ին, ժամը 15:00-ին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա. Գասպարյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 02/02/2024թ. թվականի թիվ 10Լ որոշումը, Եղեգիս համայնքի ղեկավարի 19/02/2024թ. թիվ 43Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու դրամական օգնություն:

Կողմ- 6 Դեմ- 0 Ձեռնպահ- 3 Ա. Ամիրյան, Ա. Ամիրյան, Հ. Դարբինյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124 Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆՈՐ ԱՂԲԱՎԱՅՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ, 42)-րդ կետերի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Եղեգիս համայնքի տարածքում նոր աղբավայր կառուցելուն՝ բնապահպանական, քաղաքաշինական և սանիտարական նորմերին համապատասխան աղբի անվնաս տեղադրման, մեկուսացման և չեզոքացման համար:

Կողմ- 6 Դեմ- 1 Չեռնպահ- 2

Ուրոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 125 Ա/

Լսեցին

ՔԱՂԱՔԱՅԻ ԱՏՈՄ ՅՈՒՐԻԿԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Աղնջաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Ատոմ Յուրիկի Գաբրիելյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքի (0,2հա մակերեսով, 10-007-0163-0056 կադաստրային ծածկագրով) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (ինքնակամ կառուցված շինության օրինականացման նպատակով):

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Ահ. Գաբրիելյանը չի տարվում քվեարկությանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126 Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,65 ՀԱ ԵՎ 0,67061ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ *ՄԱՍԻՆ*

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերից 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր՝ 10-029-0105-0016, մակերեսը՝ 0,65հա,

2)կադաստրային ծածկագիր՝ 10-029-0109-0049, մակերեսը՝ 0,67061հա:

2.Մեկնարկային գին սահմանել յուրաքանչյուր տոկոսի 4 000 դրամ չափով:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127 Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,70694ՀԱ ԵՎ 0,80684ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերն աճուրդով օտարելու մասին. կադաստրային ծածկագիր 10-018-0148-0033 , մակերեսը 0,70694հա, կադաստրային ծածկագիր 10-018-0101-0012 , մակերեսը 0,80684հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 (մեկ հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 9 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Հարությունյան Կարեն

Սմբատյան Արսեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե

Նիստն արձանագրեց՝ Լենա Դանիելյանը